

ՏԵՔՍԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՐԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թարգմանության խնդիրների ճշգրտումն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն, և լեզվական բուհերում այդ խնդիրների պարզաբանումը հատկապես կարևորվում է մասնագետ-թարգմանիչների պատրաստման հարցում: Թարգմանության առանցքայիժ հասկացություններից մեկի՝ համարժեքության ապահովման հիմնախնդիրներին ժանոթանալով, ուսանողները ձեռք են բերում անգլերենից հայերեն կամ ռուսերեն տեքստերի բառաքերականական, արտահայտչաճանկան կառուցվածքների մեկնություններ և թարգմանություններ կատարելու որոշակի հմտություններ: Թարգմանության դասավանդման պրակտիկան, ընդհանուր առմամբ, թե՛ ուսուցման մախնական փուլում և թե՛ միջանկյալ փուլում ենթադրում է, որ թարգմանչական հմտությունների և ունակությունների մակարդակի գնահատումը բավականին սուբյեկտիվ է, քանի որ ուսանողի հոգելեզվաբանական առանձնահատկությունները և համապատասխան գիտելիքները լիովին բացահայտված և ձևավորված չեն:

Քանի որ թարգմանական գործընթացում արտահայտչական կառուցվածքի կաղապարն ու թեման հնարավոր չէ փոխանցել բնագրից թարգմանություն առանց որոշակի կորուստների, ապա անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան տեղաշարժերը, որոնք անմիջականորեն կապված են հեղինակի և թարգմանչի անձնական՝ անհատական ոճից:

Անհրաժեշտ է սահմանել, թե որքանով է ոճական համակարգ ծառայում՝ որպես թարգմանության մեջ տեղ գտած տեղաշարժերը բնորոշող հատկանիշ: Բնագրի համեմատությամբ տեղ գտած ոճական փոփոխությունները, որոնք կատարվում են թարգմանության ստեղծման ժամանակ, կարող են մեկնաբանվել՝ որպես ոճական տեղաշարժեր: Նրանք դիտարկվում են որպես ոճական, որովհետև վերաբերում են արտահայտչամիջոցների առանձնահատկություններին, որոնց հանդիպել է թարգմանիչը թարգմանության գործընթացում: Պարտադիր չէ, որ ոճական տեղաշարժերը խախտեն բնագրի հետ նույնարժեքությունը, քանի որ լեզվական, ինչպես նաև գրական և մշակութային տարբերությունները թույլ չեն տալիս երկու կառուցվածքների ուղիղ և միաժամանակյա նույնականացումը, ուստի թարգմանությունը բնագրի համեմատությամբ պետք է տարբերվի որոշ ոճական տեղաշարժերով: Սա նշանակում է, որ տեքստային կառուցվածքի որոշ մասեր իրականացվում են և պահպանվում, իսկ դրանց մի մասն էլ նոր է ստեղծվում: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ թարգմանության մեջ տեղ գտած կորուստները այս կամ այն միջոցով պետք է փոխհատուցել: Գենց այն միջուկը, որն անցնում է բնագրից թարգմանվածքին հանդիսանում է տեքստի **անփոփոխակ:**

Ա. Պոպովիչի կարծիքով «կորուստները» լրացվում են գործառական միջոցներով: Նա գտնում է, որ գործառական համարժեքների սկզբունքը ենթադր-

րում է թարգմանչի ազատությունը միջոցների ընտրման հարցում և դրա համար էլ անխուսափելիորեն հանգեցնում ինչ-ինչ կորուստների, փոփոխությունների և ավելացումների¹:

Թարգմանական գործընթացում այս երևույթը կարելի է անվանել կառուցվածքի, փոխանցման միջոց, որը ձգտում է փոխհատուցել թարգմանության կառուցվածքի գեղարվեստական միջոցների փոփոխությունները:

Ոճական տեղաշարժերը հաստատում են այն փաստը, որ անհնար է հասնել բնագրի հետ լիակատար նույնականության, բայց միննույն ժամանակ այն վկայում է անհամապատասխանությունից խուսափելու ձգտումը: Օտար լեզուների դասավանդման գործընթացում, հատկապես թարգմանիչների հետ աշխատելիս, անհրաժեշտ ենք համարում պարզաբանել այն կարևորագույն երևույթը, թե կառուցվածքային տեղաշարժերը կայանում են ոչ միայն այն պատճառով, որ թարգմանիչը ուզում է փոփոխության ենթարկել բնագիրը, այլև այն, որ նա ձգտում է հնարավորինս ճշգրիտ փոխանցել, արտահայտել տեքստը իր ամբողջության մեջ: Թարգմանության հմտությունը կայանում է հենց բնագրին ամբողջությամբ հարազատ մնալու մեջ: Թարգմանական ճշգրտությունը պիտի չհակադրվի թարգմանչի ազատությանը, քանի որ այս երկու գործոնները պետք է ընկալել դիալեկտիկ ամբողջության մեջ:

Տեսական հիմնավորումների և մեկնաբանությունների արդյունքում ուսանողի համար ելակետային պետք է համարվի այն դրույթը, որ բացարձակ թարգմանություն գոյություն չունի՝ ո՛չ տեսության մեջ և ո՛չ էլ գործնականում: Բայց գոյություն ունի միջոց, որի շնորհիվ կարելի է գործառնության փոխհատուցման հասնել: այդ լավագույն տարբերակը գործառնության ոճական տեղաշարժն է, որի նպատակն է այլ համակարգի շրջանակներում նույնարժեքության հասցնել բնագրի առանձնահատկությունները:

Ուսանողի գործունեությունը պետք է իրականանա երկու ուղղությամբ՝ տեսական և գործնական: Ուսանողի կողմից տեսական նյութի յուրացումը ենթադրում է բուն թարգմանական հարցերի լուծում, որոնք ձևավորում են ուսանողի գիտելիքները և նրա աշխարհի պատկերման առանձնահատկությունները: Իսկ գործնական աշխատանքը անհրաժեշտ է ուղղել արդեն լեզվական միջոցների ճշգրիտ ընտրությանը և տեքստի կառուցվածքային վերարտադրության նույնարժեքության ձևավորմանը: Ելնելով այս դրույթից՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե ինչպես կարող է աշխարհի պատկերումը ներկայացվել բառակազմական միջոցների շնորհիվ գեղարվեստական տեքստի կառուցման և ընկալման գործընթացում, ինչպես նաև ուսումնասիրել այս միջոցների առանձնահատկությունները թարգմանության ժամանակ:

Հայեցակարգային տեղեկատվության փոխանցման հարցում ածանցված բառապաշարի դերի առավել համոզիչ վկայությունն է հանդիսանում Է. Ա. Պոլյի «Ե՜չի մեջ գտնված նամակը» պատմվածքը²: Պատմվածքի սյուժեն փոթորկալից ծովային տարերքն է, նավաբեկությունը, հսկայական խորհրդավոր նա-

¹ А. Попович, Проблемы художественного перевода, Блогөөвешенск, 2000, с. 126:

² Էդգար Պո, Անուրջներ և մղձավանջներ. Պատմվածքներ: «Սովետական գրող» հրատարակչություն: Երևան, 1983:

По Э., Рассказы. Москва, Издательство "Правда", 1982.
Poe E., Prose and Poetry, Moscow, Raduga Publishers: 1983

վի հայտնվելը և հանդերձյալ աշխարհի տեղափոխվելու նկարագիրը: Հայեցակարգային տեղեկությունը, որը երևան է գալիս պատմվածքի լեզվական կառուցվածքի վերլուծությունից, հետևյալն է. մարդու հոգեկան վիճակն աղետի պահին, սարսափելիի և վեհության, մահվան առջև սարսափի, հավերժության առջև խոնարհվելու վիճակը: Գործաբանական դիրքորոշումը կայանում է հետևյալում. հուզահոգեբանական ազդեցություն ընթերցողի վրա և աշխարհի պատկերի որոշակի կոնցեպտուալ ներկայացում: Կարելի է ասել, որ այս պատմվածքը, ինչպես և է. Պոյի ամբողջ ստեղծագործությունը, արտացոլում է հեղինակի աշխարհը՝ ողբերգականություն, տանջանքներ, մարդկային կյանքի ճակատագրականություն: Նպատակային հենց այս ուղղվածությամբ է բացատրվում տեքստի լեզվական միջոցների ընտրությունը, ուր մեծ դեր են խաղում ածանցավոր բառերը:

Կոնցեպտուալ տեղեկատվության և աշխարհի պատկերման հարցում ածանցավոր բառերի դերը պատկերելու նպատակով դիմենք այս պատմվածքի մեկնաբանությանը: Նախ և առաջ պետք է նշել տեքստում բազմաթիվ ածանցավոր բառերի առկայությունը, որոնց միջև դիտարկվում են որոշակի քերականական՝ բառակազմական, իմաստային և ոճական փոխկապակցվածություններ: Բառակազմական կաղապարները հիմնականում օգտագործվում են երկու խոսքի մասերի շրջանակներում՝ գոյականների և ածականների: Գոյականը ներկայացված է հետևյալ ձևով. *adj. + ness - N, adj. + ity - N, adj. + ery (ry) - N, V+ ation - N, V + ment - N, Adj. + th - N*. Այս կաղապարների շրջանակներում կառուցված ածանցավոր բառերը վերացական գոյականներ են, որոնք վերաբերում են անվանական բառերի դասին: Ածանցավոր բառերի օգտագործումը տեքստում անվանական հատուկ դաշտ է ստեղծում, որը ծառայում է հոգևոր ներաշխարհի հասկացությունները արտահայտելու խնդրին. *sensation, admiration, hopelessness, futurity, amazement etc*:

Պետք է ասել, որ վերացական այս գոյականները և՛ հայերեն, և՛ ռուսերեն թարգմանություններում ներկայացվում են որոշակի բառակազմական կաղապարներով (*несправедливость, рассудочность, приверженность* և Տ. Դ. խենթություն, ճշմարտություն, անհանգստություն, թուլություն և այլն):

Բառակազմական կաղապարների մյուս խումբը ներկայացված է մի շարք ածականներով և մակբայներով. *overwhelmed, awful, terrific, stupendous, dizzy, frightful, terrible, bitterly, gloomly, thoughtless, hopeless, unaccountable, unreliable, thrilling*: Հարկ է նշել, որ այս հուզարտահայտչական բառապաշար իր հերթին մեծ դեր է խաղում աշխարհի պատկերման հարցում և նույնատիպ բառապաշարի պահպանումն է, որ թույլ է տալիս դիտարկել թարգմանությունը՝ որպես համարժեք արտասովոր, վտանգավոր, ահավոր, մոլեգնող, սաստկացող, անտանելի, անհավատալի, սուսկալի, սարսափելի, զարհուրելի, ահռելի, բացառիկ, սաստիկ, տարրօրինակ, չարագուշակ, անհատակ և այլն, *неразумный, необычайный, неистовый, невообразимый, неудержимый, пронзительный, бешено, неизменно* և Տ. Դ.

Վերլուծելով աշխարհը պատկերող այս ածանցավոր բառերի նշանակությունն ու արժեքը՝ անցնենք այն հիմնական հասկացությունների վերհանմանը, որոնք պատկերում են աշխարհն այս տեքստում: Իմաստային վերլուծու-

թյունը ցույց է տալիս, որ այս տեքստում առանձնանում են բառախմաստային խմբեր, որոնք ծառայում են՝

ա) բնության երևույթների պատկերման նպատակին (*wilderness of foam, violence of the wind, the whirlpool of mountainous foaming ocean, the swelling of the black stupendous seas, warring of the wind and ocean, thundering and roaring of the ocean*), (սուկալի էր *փրփրած* օվկիանոսը, *մղեգնող* ջրապտույտը, *հզոր շիթերով* և այլն), (огромная масса вспененной воды, вспененные буруны, словно стены, вздымавшиеся ввысь, огромный вал, непроглядный мрак, бушующее море),

բ) մարդու հոգեվիճակը պատկերելու նպատակին և զգացմունքների, արտահայտմանը (*confusion, madness, meditation, uneasiness, eagerness, sublimity, admiration, amazement, hopelessness, broken, sensation, peevishness, shattered, overwhelmed, bitter, gloomily etc.*), (անհանգստություն, թուլություն, հիմարություն, անդորր, վախ, երկյուղով և այլն), (сметенье, удивленье, безразличие, надежда, ужас, трепет, покой, суеверный, неистовый, невообразимый, снедаемый и т. д.)

գ) և վերջին՝ քանակապես ամենամեծ խումբը, որ ուղղված է սարսափ, վախ, անհանգստություն արթնացնելու նպատակին (*awful, terrible, terrific, fearful, frightful, horrible*), (կատաղի, վայրի, սուկալի, սարսափելի, գարհուրելի, ջղային, սպառնալից և այլն), (чудовишный, беспокойный, невообразимый, суеверный, ужасного, неистового и т. д.):

Ածանցավոր բառերի բառակազմական կապերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեքստում շատ են օգտագործվում համանմանական և համահարաբերակցական բառակազմական ձևերը, ինչպես նաև ածանցավոր բառակազմական ձևերը: Փորձենք ուսումնասիրել դրանք տեքստի ընկալման և մեկնաբանության հայեցակետերից: Բառարմատի կրկնությունը տեքստում համահարաբերակցական շրջաներ է ստեղծում, որոնք նպաստում են տեքստում հանգուցային բառերի վերհանմանը: Այս բառերը ցույց են տալիս կոնցեպտուալ արժեք ունեցող այն հասկացությունները, որոնք հիմք են տալիս տեքստի հաղորդած տեղեկատվության ընկալման համար: Տվյալ տեքստում նման համահարաբերակցականության օգտագործումը (*terror-terrific-terrible-terribly, horror-horrible, hope-hopeless, death-dead, mad-madness-madly, unnatural-supernatural, eternity-eternal, curious-overcurious, foam - foaming*) շեշտում է, ուժգնացնում տեքստում արտացոլված սարսափի մթնոլորտը, սարսափազդու և առեղծվածային իրադրությունը: Հայերենում և ռուսերենում այս երևույթը նս մեկ - երկու դեպքում պահպանվել է (*սարսափ - սարսափահար - սարսափելի*), (*страх - страшный - страшно; ужас - ужасный - ужасающий*):

Ինչ վերաբերում է ածանցային կրկնությանը, ապա նրա դերը տվյալ տեքստի ընկալման գործընթացում ավելի կարևոր է: Այս տեքստում հուզական ազդեցությունը հասնում է իր գագաթնակետին առաջին հերթին ժխտական ածանցների լայն կիրառման շնորհիվ, որոնք, ինչպես հայտնի է, մեծ ոճական ներուժ ունեն: Պետք է նշել, որ կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև ածանցների կիռառման հաճախականությունը (*inevitable, irresistible, hopeless*,

useless, unsteady, unaccountable, unquiet etc., uneasy, unrelieved, unfathomable, unabated, ungovernable, unwilling, unfit, unnatural, thoughtless, ineffable, indefinite, inadequate, incomprehensible, impossible, ineffective, irrepressible): Կցանկանայինք մշել, որ ստեղծագործության ընդհանուր ոճական կառուցվածքը թարգմանություններում պահպանվել է մասամբ ժխտական ածանցների կրկնության և նրանց օգտագործման հաճախականության պահպանման շնորհիվ. հայերենում դա *ան* մախածանցն է, իսկ ռուսերենում *не-* և *без-* մախածանցները (**անհերքելի, անհանգստություն, անտանելի, անհավատալի, անհամբերի, անհատակ, անխոս, անսանձ, անխուսափելի, անհմար և այլն, (неразумный, необыкновенный, невыносимо, невообразимый, незначительным, невероятным, неудержимой, неминуемой, бездонный, безудержный и т. д.):**

Հարկավոր է մշել, որ ածանցային կրկնությունը ևս մեկ եակն առանձնահատկություն ունի. միննույն ածանցի կրկնությունը միավորում է ածանցավոր բառերը՝ դրանք վերածելով մի բառաշարքի, որոնք ունեն նույն բառակազմական կաղապարը, որի շրջանակներում ածանցավոր բառերը բնութագրվում են բառակազմական իմաստի ընդհանրությամբ: Սակայն սրանք ոչ թե ընդհանուր բառակազմական իմաստ ունեցող բառերի շարքեր են, այլ այնպիսի միացություններ, որոնցում բարդ իմաստային փոխազդեցություն է դիտվում, որը թույլ է տալիս համադրել, նույնականացնել, հակադրել նրանց նշանակած իմաստները: Բառակազմական իմաստի ընդհանրությունը թույլ է տալիս ընկալել այս բառերը և այն կոնցեպտները, որ նրանք արտահայտում են ոչ թե առանձին, այլ փոխհարաբերակցության մեջ, որոշակի կարգերի տեսանկյունից, որը նպաստում է առանձին հասկացությունների միավորմանը ավելի ընդհանուր և ավելի բարդ հասկացությունների շրջանակներում կոնցեպտներում, որոնց ճշգրիտ ընկալման և մեկնաբանության համար խարախոր լեզվական գիտելիք է պահանջվում: Ուստի մենք գտնում ենք, որ լեզվաբանական — թարգմանչական դպրոցի ուսանողների համար խիստ կարևոր է լեզուն թարգմանությունների միջոցով ուսուցանելը: Սույն ուսումնասիրությունը, մեր համոզմամբ, կարող է առավելագույնս նպաստել բառագիտության, ոճաբանության և համեմատական տիպաբանության դասընթացների գործնական պարապմունքներին:

Այսպիսով, առանց տեսական հաստատուն հիմքերի, թարգմանական գործը սպառնում է վերածվել մի յուրատեսակ արհեստի, որն առավելապես հիմնվում է թարգմանչի անձնական փորձի և ճաշակի վրա: Ուստի որակյալ մասնագետ թարգմանիչներ պատրաստելու համար խիստ կարևորվում է և՛ ուսումնական մյուսի մշակումը, և՛ մատուցման որոշակի սկզբունքների և եղանակների կիրառումը:

1. Исследования по теории перевода (сб. науч. тр. вып. 373) М., МГЛУ: 1991
2. Тер—Минасова С., Язык и межкультурная коммуникация Слово/Slovo, Москва: 2000
3. Телия В., Метафоризация и ее роль в создании языковой картины мира//Роль человеческого фактора в языке. Москва: 1988
4. Попович А., проблемы художественного перевода, Благовещенск: 2000

Б. МАРГАРЯН

МЕТОДИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ НАВЫКОВ ПЕРЕВОДА ТЕКСТОВ

В данной методической статье рассматривается проблема перевода художественного текста в совокупности с социолингвистической компетенцией, т. е. учитывается не только адекватность передачи смысла текста посредством языкового материала, но и психолингвистическая компетенция и мировоззрение студентов. Рассматриваются те языковые модели, в которых обобщена совокупность грамматических, лексических и стилистических структур, которые создают концептуальную информацию, формулирующую языковую картину мира.

С методической точки зрения студентам—переводчикам необходимо ознакомление с различными методами разработки текстов. Одним из этих методов является переводческая интерпретация текста, которая рассматривается как первый шаг на пути создания эквивалентного текста на языке перевода.

Анализ проблем, возникающих при переводческой интерпретации текста, показывает, что для подготовки специалиста—переводчика необходима не только разработка определенного учебного материала, но и применение определенных принципов и методов преподавания переводческих навыков.

B. MARGARYAN

METHODOLOGICAL PECULIARITIES OF TEXTUAL INTERPRETATION

The aim of the present methodological research is to analyze the issues of literary text translation in the aggregate with the socio-cultural competence, i. e. taking into account not only the language material through which the adequacy of text meaning in the target language is achieved but the psycholinguistic competence and the world outlook of the student is considered as well. The research analyses the language models in which the whole complex of grammatical, lexical and stylistic forms creates the conceptual information embodied in the text.

From the methodological view—point students studying translation must certainly be aware of the different methods of text analysis. Text interpretation which is considered the first step of the creation of the equivalent text in the target language is one of these methods.

Thorough consideration of the problems which arise in the process of the interpretation of the text under translation shows that for the training of translators we need not only certain training material but we also need to work out certain methods according to which translator's skills are obtained.